



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ



յս օրերին, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքի տարածքի վրա, համագգային արժանավայել հանդիսությամբ և երախտագիտական անվերապան զգացմունքով նշվում է հայ ժողովրդի տաղանդավոր գավակ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արժանավոր միաբան, հայ երաժշտական մշակույթի խոշորագույն և սիրելագույն դեմքերից մեկի, Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակը:

Կոմիտաս վարդապետը իր երաժշտական մեծարժեք և անկրկնելի վաստակով, ամուր կերպով կանգնել է մեր մշակույթի պատմության անմահ փառքերի լուսահույլին մեջ: Հավետ վառ ու կենդանի կմնա տարաբախտ վարդապետի խնկարույր հիշատակը հայ սերունդների երախտագետ սրտերում:

Կոմիտաս վարդապետի պայծառ անունը՝ որպես հայկական երաժշտության ռաֆֆի-րայի՝ և մեծ գործը՝ որպես հայ երաժշտական մշակույթի ինֆեռոնոման տեսաբանի և հայկական ինֆեռոնոման երաժշտական դրա-րոցի հիմնադրի՝ շատ քանկագին ու եվի-րական են յուրաքանչյուր հայ մարդու հա-մար: Կոմիտաս վարդապետի կյանքն ու գործունեությունը ուսանելի են և մոռու-մենալ՝ իրենց ողջ գրավչության, պարզու-րյան և վեհության մեջ: Կոմիտաս վարդա-պետը միաժամանակ սուրբ է և նահատակ: Նա 1915 թվականին, հավասար չափով ապ-րեց իր ժողովրդի գողգոթան, բաժանեց մտքի, գրչի, արվեստի իր ընկերների ա-րյունոտ նակատագիրը և թեև հրաշքով ա-զատված վերադարձավ ասուրի հանապար-հից փշրված իմացականությամբ և ալեկոծ

հոգով, սակայն մինչև 1935 թվականը ապ-րեց որպես ԿՆՆԴԱՆԻ ՄԵՌԵՆԼ, որպես ԲՈՂՈՔ՝ հայ ժողովրդի, նրա մշակույթի և ար-վեստի դեմ կատարված անուր գազանու-րյանց:

Կոմիտաս վարդապետը, որպես հայ-րենասեր ու ազնիվ մարդ, որպես երաժիշտ ու մանկավարժ, հմուտ ազգագրագետ, խմբավար և երգիչ, ԺԹ դարի վերջին շրջանի մեր հասարակական և մշակութային զար-թոնքի ամենաինֆեռնոմիկ և անկրկնելի մեծություններից մեկն է: «Մահկանացու ծնեալ՝ անմահ գիրն յիշատակ եթող» (Խա-րենացի):

Կոմիտաս վարդապետը սնվել ու կրթվել է Մայր Աթոռի սրբազան կամարների տակ, Ս. Էջմիածնի մթնոլորտում: Նա իր երա-ժրշտական առաջին կրթությունը ստանում է Մայր Աթոռում, որպես ձայնեղ և երաժրշ-տական ընդունակություններով օժտված շնորհալի պատանի, Ղևոնդ եպիսկոպոսի հմուտ ղեկավարության տակ, իսկ Սահակ վարդապետ Ամատունուց սովորում է հայ-կական ձայնանիշների ուսմունքը և ուր ձայն շարականների երգեցողությունը: Ճե-մարանի ուսանողության տարիներին, պա-տանի խոստումնալից Սողոմոնը, ապագա Կոմիտաս վարդապետը, առատորեն սնունդ է փողում մեր հոգևոր երգերից և ժողովրդ-դական երաժշտության գանձերից, իր հո-գու և մտքի բազում քելերով կապվում մեր ավանդություններին, Մայրենի հողին, ջրին, աշխատանքին և բնությանը: 1893 թվակա-նին նա սարկավազ է ձեռնադրվում, և ընդ-միշտ իր անունն ու կյանքը անխզելիորեն կապում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, և

Մայր Աթոռում ծավալում երաժշտական ընդարձակ գործունեություն բազմազան ուղղությամբ, որպես Դեռագյան ձեմարանի երաժշտության դասախոս, որպես երգչախմբի ղեկավար, երգահան, ազգագրագետ, երաժշտության տեսաբան: Մայր Աթոռը և Հոգևոր ձեմարանը Կոմիտաս վարդապետի համար հանդիսացել են յուրահատուկ ստեղծագործական մի աշխատանոց: Հայկական շնչով և զգայնությամբ հարուստ այդ հոգևոր-իմացական հաստատության մեջ Կոմիտաս վարդապետը ոչ միայն վայելում է երաժշտասեր Դեռագ Դ կաթողիկոսի և ապա երիմյան Հայրիկի հայրական հոգատարությունը, պաշտպանությունն ու սերը, այլ նաև անմիջականորեն շփվում գյուղական ժողովրդական շրջապատի հետ, և ժողովրդական ստեղծագործության ակունքից փառում հայ երգի համը ու հոտը, բարձրությունն ու պարզությունը: 1893—1910 թվականներին, 17 տարի անընդհատ, Կոմիտաս վարդապետը իր ձեռքի տակ է ունեցել Գեղարգյան ձեմարանի երգչախումբը և ուսանողությունը, իր երաժշտական գործունեության և ազգագրական ուսումնասիրությունների համար: Հանախ նա նեմարանցիների բերած ժողովրդական երաժշտական գանձերից էր փառում իրեն անհրաժեշտ երաժշտական նյութերը և աշխատում նրանց վրա: Ապա ինքը անձամբ ման էր գալիս, մտնում ամեն տուն ու երդիկ, ազատորեն ներկա լինում գեղջկական հարսանիքների, կրոնական ուխտագնացությանը, արտի ու կալի, դաշտային աշխատանքների, և օծված խորաթափանց մտով ու զինված խուզարկու մեթոդներով, որսում, փառում մեր ազգային երաժշտության բարձրագույն ձևերը, ժողովրդական երգերն ու պարերը և մեր հոգևոր երգերի՝ շարականների, տաղերի, մեղեդիների, գանձերի՝ նախնական հարագատ եղանակները և ապա այդ բոլորը Մայր Աթոռում ենթարկում գիտական, երաժշտական ստեղծագործ ուսումնասիրության:

Ո՛րտեղ է Կոմիտաս վարդապետի մեծության գաղտնիքը, նրա անվան ու գործի հմայքը, փաղցրությունը:— Դեպի հայ ժողովուրդը և նրա հոգևոր մշակույթը ունեցած նրա խորունկ սիրտ և պաշտամունքի մեջ: «ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Է ԱՄՆԱՄՆԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԸ, ԳՆԱՑՆՔ ԵՎ ՍՈՎՈՐՆՑՆՔ ՆՐԱՆՆՑ»: Եվ Կոմիտաս վարդապետը, մեծ արվեստագետի խորաթափանցությամբ, գնաց ժողովրդական նշմարիտ արվեստի նախապարհով: Նա ապրեց ժողովրդի մեջ, և ստեղծագործեց ժողովրդի համար:

Կոմիտաս վարդապետը մեծ է որպես երաժիշտ և որպես Հայ Եկեղեցու վարդապետ, ինչպիսին էին Ս. Մեսրոպը, Ստեփանոս

Սյունեցին, Նարեկացին, Շնորհալին, Տարուհացին և ուրիշներ: Նա արժանավոր հաջորդն էր մեր եռանկն հոգևորականների, որոնք միաժամանակ եղել են մեծ արվեստագետներ, երաժիշտներ ու փիլիսոփաներ, բանաստեղծներ ու երգիչներ:

Կոմիտաս վարդապետը հայկական ազգային երաժշտությունը ընկալում էր հիմնական երկու մեծ նյութերով՝ ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, որոնք, ըստ նրան, երկու փուլեր են, ազգակիցներ, նույն մոր՝ հայ ժողովրդի հարագատ ծնունդներ: Նա երկար մարտնչեց զբաղվել է հայ հոգևոր և աշխարհիկ երգերի, երաժշտության ծագման, զարգացման և զանազան փոխազդեցությունների հարցերով: Ըստ Կոմիտաս վարդապետի, դրանցից ամեն մեկը ունի իր ռեալիստ առանձնահատկությունները, այդ պատճառով Կոմիտաս վարդապետը դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ուներ իր ստեղծագործական առանձին մոտեցումը, որքան էլ մեծ լինեց հայ հոգևոր և աշխարհիկ երգերի ներքին աղերսը, կապը: Կոմիտաս վարդապետը մեր հոգևոր և աշխարհիկ երաժշտության ուսումնասիրության բնագավառում տվել է անկորելչելի և մնայուն արժեք ներկայացնող գիտական երաժշտական յուր աշխատություններ, որոնք նրա անունը կմիացնեն հայ մշակույթի մեծ երախտավորների սրբազան հույլին:

Հայ մշակույթի գանձարանում յուրահատուկ տեղ են գրավում մեր հոգևոր-եկեղեցական երգերը՝ շարական, տաղ, գանձ, մեղեդի, և որոնք կազմում են հայ երաժշտական մշակույթի ժառանգության մի պատկանելի մասը: Հոգևոր այդ երգերի մեջ, ինչպես նշում է Կոմիտաս վարդապետը, կա «հստակ, միամիտ, չբեմեռանդ, հավատացյալ ոգի, ոգի, որի մեջ պայծառ փայլում է մեր նախնայաց անձման, զգայուն, կենդանի և վեհ սիրտը, որ շինել է առավոտյան օդի պես»:

Կոմիտաս վարդապետը նրբին արվեստագետի ընկալումով և մասնագետի բժախրեղությունով զբաղվել է հայ եկեղեցական-հոգևոր երաժշտության պատմության տեսության հարցերով, ինչպիսիք են այդ հարցերին նվիրված նրա գիտական աշխատությունները՝ «Հայոց եկեղեցական եղանակներ» (1894), «Հայոց եկեղեցական երաժշտությունը ԺՊ դարում» (1897), «Երգեցողություն՝ Ս. պատարագի» (1898), «Հայ եկեղեցական երաժշտություն» (1898), «Շարականների խաղերի նշանակությունը» (1914) և այլ աշխատություններ:

Կոմիտաս վարդապետը ավելի քան 25 տարիներ զբաղվել է հայ գեղջուկ երաժշտության պատմության և ուսումնասիրության հարցերով: Այդ բնագավառին նվիրված նա ունի բազմաթիվ մեծարժեք աշխատություններ, տեսական դիտողություններով և երաժշտական նոր դրույթով հարուստ և գիտականորեն հիմնավորված, որոնք ապացուցում են, որ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ԻՆՔՆԱՏԻՊ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, որ հայ երգը շատ հին է և որի արմատները բարձրանում են մինչև հայ ժողովրդի ծագման դարերը, սկիզբ առնում պատմական հեռու անցյալից: Հայ ժողովրդական երգը, հանձին Կոմիտաս վարդապետի՝ գտել է իր ամենացայտուն վարպետին: Հայ ժողովրդական երգը Կոմիտասի համար, հայ շինականի կյանքի ու կենցաղի, աշխարհայացքի ու հոգեկան ապրումների, նրա պատմության և բնաշխարհի, ազգային մահուր ու ինքնատիպ լեզվի արտահայտություն է: Այդ բնագավառում Կոմիտասը կատարեց պատմական և անփոխարինելի մեծ դեր հայ երաժշտության պատմության մեջ: Նա հանձնարեց հմտությամբ գտավ ՀԱՅ ԵՐԳԻ, ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՃԸ, ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՈՃԸ: Կոմիտաս վարդապետի համար ժողովրդական երաժշտությունը ներշնչման անսպառ աղբյուր է: Իրա համար դժվար է ասել, քե ո՞րտեղ է ավարտվում ժողովրդական երաժշտությունը և ո՞րտեղ է սկսվում Կոմիտասյան սեփական ստեղծագործությունը:

Հայ կլասիկ երաժշտության մեջ, հայկա-

կան ինքնատիպ, ինքնուրույն երաժշտական ռեի բացահայտման պատիվը պատկանում է Կոմիտաս վարդապետին: Նա հայ ազգային երաժշտության հիմնադիրն է:

Դժվար է, խմբագրականի այս սեղմ տողերի մեջ, սպառիչ կերպով խոսել Կոմիտասյան երաժշտության ծառանգության բոլոր արժանիքների վրա, հայ երգին և հայ ժողովրդին նրա մատուցած ծառայության վրա:

Տարաբախտ վարդապետի բնարք լոեց իր ստեղծագործ ուժերի ծաղկման և կարողությունների ամենածաղկուն և բեղուն շրջանում: Մոտ 20 տարի նա ապրեց՝ փչրված իմացականությամբ և հոգեկան անհավասարակշիռ վիճակում, «արվեստի ստեղծագործության կյանքին շատ կանուխ խլվելով»: Լոեց վաղածամ Կոմիտասյան սուրբ բնարք և ՀԱՅ ԵՐԳԻ ՄԵՄ ՎԱՐՊԵՏԸ ներամփոփվեց ինքն իր մեջ, հեռու իր ժողովրդից և այնուհետև սրտմաշում երգեր երգեց միայն ինքն իր մեջ, ինքն իրեն համար: Նա մեռավ երգելով ու գերեզման տարավ իր հետ հայ երաժշտության վերաբերյալ լուսավոր նոր մտքեր, գաղափարներ, հայտնություններ: Նա կյանքից թռավ երազի նման, բայց բացեց լուսավոր ահուս հայ երաժշտության մեջ:

Կոմիտաս վարդապետը հայ ժողովրդի ազգային հպարտությունն է, պարծանքը: ՆՐԱ ՊԱՅՄԱՆ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԱՆՄԱՀ ԳՈՐԾԸ ՀԱՎԵՐԺ ԿԱՊՐԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԱԽՏԱԳԵՏ ՍՐՏՈՒՄ, ՀԱՅ ԵՐԳԻ ՀԵՏ:

Փա՛ռք անմահ Կոմիտաս վարդապետին և նրա մեծ գործին:

